Արձանագրություն N 02
Ֆուտզալի և կանանց ֆուտբոլի Կոմիտեի Նիստի

05/11/2014թ ք.Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ս. Ավետիսյան
ԱՆԴԱՄՆԵՐ ՝ Ռ.Նազարեթյան
ՀՐԱՎԻՐՎԱԾ Լ.Հայրապետյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. Միքաելյան

ՕՐԱԿԱՐԳ

1. Կանանց ֆուտբոլի թիմերի , Արմավիրի և Հրազդանի մարզիչների վերաբերյալ :
2. Ֆուտզալի առաջնության վերաբերյալ կանոնակարքի կետերի փոփոխության վերաբերյալ:
3. Կանանց ֆուտբոլի ձմեռային ստուգողական մրցաշարի վերաբերյալ:
4. կանանց ֆուտբոլի թիմերի մարզիչների պայմանագրի կետերի փոփոխության վերաբերյալ:

1. Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Է.Միքաելյանը ՝ առաջարկեց դիմել ՀՖՖ ղեկավարությանը ընդունել աշխատանքի ՀՖՖ- ում, Արմավիրի և Հրազդանի մարզիչներին քանի որ թիմերը գրանցված են ՀՖՖ-ում՝ և մասնակցեցին աշնանային ստուգողական մրցաշարին : Հարցը դրվեց կոմիտեի քվեարկության՝ քվեարկության անդյունքում կոմիտեն միաձայն որոշեց դիմել ՀՖՖ ղեկավարությանը Սամվել Անտոնյանին(Արմավիր Ս.Ա), Արթուր Հարությունյանին(Էմաննուել) Հռազդան ընդունել աշխատանքի ՀՖՖ-ում որպես մարզիչ:

2. Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Ս.Ավետիսյանը, առաջարկեց 2014-2015թթ. մրցաշրջանի ֆուտզալի առաջնության անցկացման Կանոնակարգի հոդվածների փոփոխության վերաբերյալ՝ Հոդված 3-ի 3-րդ կետը շարադրել հետևյալ կերպ: Առաջնությանը մասնակցել ցանկացող կազմակերպությունները /այսուհետ

Ակումբները/ գրավոր մինչև ս/թ նոյեմբերի 7-ը հաստատում են իրենց մասնակցությունը ներկայացնելով սահմանված ձևով Հավաստագիր: Հավաստագրին կից ներկայացվում է մուտքավճարի մի մասի՝ 30 000 /երեսուն հազար/ դրամի մուծման անդորագրի պատճեն:

Հոդված 10-ի 4-րդ կետը շարադրել հետևյալ կերպ: Առաջնության անցկացման ժամկետներն են.
1. առաջին փուլ 2014թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները ներառյալ,
երկրորդ փուլ 2015թ. փետրվար-մայիս ամիսները ներառյալ:

Հոդված 10-ի 5-րդ կետը շարադրել հետևյալ կերպ: Առաջնությունը սկսվում է ս/թ նոյեմբերի 22-ը: խաղացանկերը ներկայացվում է թիմերին ոչ ուշ քան 5 օր առաջ:
՝ Հարցը դրվեց կոմիտեի քվեարկության՝
քվեարկության արդյունքում կոմիտեն ընդունեց միաձայն որոշում ՝դիմել

ՀՖՖ ղեկավարությանը2014-2015թթ. մրցաշրջանի ֆուտզալի

առաջնության անցկացման Կանոնակարգի հոդվածների փոփոխության

վերաբերյալ՝

Հոդված 3-ի 3-րդ կետը շարադրել հետևյալ կերպ: Առաջնությանը մասնակցել ցանկացող կազմակերպությունները /այսուհետ Ակումբները/ գրավոր մինչև ս/թ նոյեմբերի 7-ը հաստատում են իրենց մասնակցությունը ներկայացնելով սահմանված ձևով Հավաստագիր: Հավաստագրին կից ներկայացվում է մուտքավճարի մի մասի՝ 30 000 /երեսուն հազար/ դրամի մուծման անդորագրի պատճեն:
Հոդված 10-ի 4-րդ կետը շարադրել հետևյալ կերպ: Առաջնության անցկացման ժամկետներն են.

- առաջին փուլ 2014թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները ներառյալ,
- երկրորդ փուլ 2015թ. փետրվար-մայիս ամիսները ներառյալ:
  Հոդված 10-ի 5-րդ կետը շարադրել հետևյալ կերպ: Առաջնությունը սկսվում է ս/թ նոյեմբերի 22-ը: խաղացանկերը ներկայացվում է թիմերին ոչ ուշ քան 5 օր առաջ:

3. Օրակարգի 3-րդ հարցով ելույթ ունեցավ Է.Միքաելյանը և առաջարկեց անցկացնել կանանց ֆուտզալի ձմեռային

ստուգողական մրցաշար : Հարցը դրվեց կոմիտեի քվեարկության՝
քվեարկության անդյունքում կոմիտեն միաձայն որոշեց դիմել ՀՖՖ ղեկավարությանը որոշում ընդունել, սկսել մրցաշարը փետրվարի 9-ից :

4. Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Է.Միքաելյանը՝ առաջարկեց կանանց ֆուտբոլի թիմերի մարզիչների աշխատանքային պայմանագրի 2.2.4 կետը շարադրել հետեվյալ կերպ :
Պահպանել և ավելացնել թիմի մարզիկների քանակական կազմը , որը չպետք է պակաս լինի 20 հոգուց՝ տարիքային կազմի հետևյալ հարաբերակցությամբ՝
12-17 տարեկան -12 հոգի
17 տարեկանից բարձր 8 հոգի:
Մարզիկները պետք է գրանցվեն ՀՖՖ-ում համաձայն ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի:
՝ Հարցը դրվեց կոմիտեի քվեարկության՝
քվեարկության արդյունքում կոմիտեն ընդունեց միաձայն որոշում ՝դիմել ՀՖՖ ղեկավարությանը ընդունել հետևյալ փոփոխությունները.. կանանց ֆուտբոլի թիմերի մարզիչների աշխատանքային պայմանագրի 2.2.4 կետը շարադրել հետեվյալ կերպ :
Պահպանել և ավելացնել թիմի մարզիկների քանակական կազմը , որը չպետք է պակաս լինի 20 հոգուց՝ տարիքային կազմի հետևյալ հարաբերակցությամբ՝
12-17 տարեկան -12 հոգի
17 տարեկանից բարձր 8 հոգի:
Մարզիկները պետք է գրանցվեն ՀՖՖ-ում համաձայն ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի:

Նախագահ Ս.Ավետիսյան

Քարտուղար Է.Միքաելյան